



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

0010 ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 5
Էլ-փոստի՝ h.navasardyan@prosecutor.am

Հ Ր Ա Մ Ա Ն N 15/168-Ա

27 դեկտեմբերի 2021թ.

ք. Երևան

**ՀՀ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 31-3-Մ2-1) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ
ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի, 114-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ դատախազության արարողակարգի վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 31-3-Մ2-1) թափուր պաշտոնը համալրելու համար կազմակերպվող մրցույթի թեստավորման անցկացման պատասխանատուների կողմից կազմված արձանագրությունը՝ հրամայում եմ

1. Հետաձգել ՀՀ դատախազության արարողակարգի վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 31-3-Մ2-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2021 թվականի դեկտեմբերի 27-ին՝ ժամը 14:30-ին նախատեսված **ներքին** մրցույթի թեստավորման անցկացումը:
2. ՀՀ դատախազության արարողակարգի վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 31-3-Մ2-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար **ներքին** մրցույթի թեստավորման փուլը կազմակերպել և անցկացնել 2022 թվականի հունվարի 4-ին՝ ժամը 14:30-ին, իսկ հարցազրույցի փուլը՝ 2022 թվականի հունվարի 7-ին՝ ժամը 11:30-ին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

 **Հ. ԱՎԱՍԱՐԴՅԱՆ**